ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հունվար 2025թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հունվարին գումարվել է Պալատի խորհրդի 2 նիստ՝ **10.01.2025թ.-ին և 23.01.2025թ.-ին:**
10.01.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 6 հարց: Քննարկման ընթացքում հաստատվել են Պալատի անդամի անդամակցությունը օրենքի ուժով դադարեցնելու, Պալատի անդամներ «Ջի Ընդ Քո Աուդիտ Գրուպ» և «Աուդիտ Սթար» ՍՊԸ-ների նկատմամբ ԿՊՄ կիրառելու մասին և այլ օրակարգային որոշումներ:

23.01.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 3 հարց: Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց և մեկ կազմակերպությանը Պալատի անդամ ընդունելու մասին որոշումները: Այլ հարցերի ներքո Պալատի նախագահը տեղեկատվություն է ներկայացրել ձմեռային քննաշրջանի արդյունքների և ՇՄԶ հայտարարագրերի ներկայացման վերաբերյալ:

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿ

Ս.թ. հունվարի 15-ին մեկնարկեցին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի քննությունները: Տեղի ունեցավ որակավորման ծրագրի 2-րդ՝ **Կ**առավարչական հաշվառում առարկայի քննությունը: Քննությանը մասնակցում էր 101 դիմորդ:

Հունվարի 16-ին տեղի ունեցավ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի 3-րդ՝ Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք առարկայի քննությունը: Քննությանը մասնակցում էր 104 դիմորդ:

Հունվարի 17-ին տեղի ունեցավ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի 7-րդ՝ Աուդիտ և հավաստիացում առարկայի քննությունը: Քննությանը մասնակցում էր 22 դիմորդ:

Հունվարի 20-ին տեղի ունեցավ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի 4-րդ՝ ՀՀ հարկային օրենսդրություն առարկայի քննությունը: Քննությանը մասնակցում էր 193 դիմորդ:

Հունվարի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի 1-ին՝ Ֆինանսական հաշվառման հիմունքներ առարկայի քննությունը: Քննությանը մասնակցում էր 169 դիմորդ:

Հունվարի 22-ին տեղի ունեցավ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի 5-րդ՝ Ֆինանսական կառավարում առարկայի քննությունը: Քննությանը մասնակցում էր 88 դիմորդ:

Հունվարի 23-ին տեղի ունեցավ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի 6-րդ՝ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում առարկայի քննությունը: Քննությանը մասնակցում էր 124 դիմորդ:

Որակավորման քննությունների ամփոփում

Ընդհանուր առմամբ աշնանային և ձմեռային քննաշրջանի քննություններին մասնակցել է **817** մասնակից, ինչը վկայում է մասնագիտության նկատմամբ հետաքրքրության անշեղ աճի, պետական պատվիրակված գործառույթների պատշաճ իրականացման և որդեգրած սկզբունքների հանդեպ աճող վստահության մասին: Մասնակիցների այս թիվը մոտ 6 անգամ գերազանցում է 2021 թվականի մեկ քննաշրջանի ցուցանիշը՝ ևս մեկ անգամ փաստելով Պալատի հաջողություններն ու շարունակական զարգացումը: Պալատը հավատարիմ մնալով իր առաքելությանը և սկզբունքներին՝ շարունակելու է նպաստել մասնագիտության առաջընթացին: Հաջորդ քննաշրջանը և դասընթացները նախատեսվում է անցկացնել մեր նոր տարածքում՝ հագեցած տեխնիկական նոր հնարավորություններով ու բարելավված պայմաններով, ինչը ևս կպայմանավորի արձանագրված ցուցանիշների շարունակական աճն ու զարգացման կայուն դինամիկան:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 13.01.2025թ.-ին և 20.01.2025թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին հաստատել ընդհանուր թվով 5 ֆիզիկական անձանց և 1 կազմակերպության անդամակցությունը Պալատին:

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 29.01.2025թ.-ին, որում հավանություն է տվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

17.01.2025թ.-ին տեղի է ունեցել «ՖՀՄՍ –16 Վարձակալություն» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ավետիք Մովսիսյանը:

29.01.2025թ.-ին տեղի է ունեցել «Խեղաթյուրումների գնահատում» թեմայով դասընթացը: Այն վարում էր Էմիլ Վասիլյանը: